

Մամլո հաղորդագրություն

# BABYLON E

«Բաբելոն» ցուցահանդեսը ներկայացնում է նկարիչների, ովքեր գործ ունեն խոսքի, ցանկացած լեզվի հիմնարար կերպով երկիմաստ բնույթի, մշտական մի թյուրմբեման հետ, որը սպառնում է բոլոր փոխանակություններին ու թարգմանություններին, ինչպես նաև հասկացությունների բազմակարծության հետ, որ բովանդակում է որևէ բառ մեկ լեզվում՝ մյուսի համեմատ: Բազմաթիվ օտար, երբեմն մոռացված լեզուները կլինեն այս ցուցահանդեսի ուսումնասիրության առարկան, որը կցանկանար վերհանել լեզուների հարաշարժությունը և ոչ նորմատիվ կողմերը: «Բաբելոն» ցուցահանդեսը սատարում է այն արվեստագետներին, ովքեր քանդակում են ձևեր բառերի համար և բառեր՝ ձևերի համար: Կորսված այբուբենները, էական նորաբանությունները կամ «ներկայացումների ներկայացումը», մեզ «լ»-ի փոխարեն «ր» արտասանելուց կտանեն ապորիա՝ լեզուների բնորոշման մասին խորհրդածության միջոցով:

Լեզուն ազդում է մեզ վրա, քանի որ դա մեր լուսամուտն է դեպի աշխարհ: Լեզուն աշխարհի հաղորդված և անցողական ձևն է, աշխարհի փոխակերպումը, որը թարգմանում և բացատրում է այդ աշխարհը, սակայն նաև դավաճանում է դրան: Մայրենի լեզուն մտերմիկ կերպով քանդակում է մեր տեսակետը: Կատարողական լեզուն կազմում է մի գործողություն, երբ ասել նշանակում է անել: Բանաստեղծական լեզուն գրականության էությունն է. դա լեզու է, որը ինքն իրեն դիտում է որպես գեղագիտական սուբյեկտի: Բնագիր լեզուները և դրանց բանավոր ու գրավոր խոսքը ծիսականացված գործելակերպեր են, որոնք ընկղմված են մեր մտքից դուրս գտնվող առեղծվածների ու առասպելների մեջ:

Լեզուները, լինեն դրանք ծայնային թե գրաֆիկական, նշանների թե պատկերների, արհեստական թե բնական, կենդանի կամ մեռած, պաշտոնական թե ծածկագրված, մեծաթիվ են, թեպետ դրանց թիվը և բազմազանությունը նվազում են գլոբալացման հետևանքով: Այդուհանդերձ, փոխադարձ համաձայնությունը չպետք է լինի միանշանակ, կոնսենսուսային կամ նորմատիվ: Ընդհակառակը, դրանում պետք է ներառված լինեն բազմակի իմաստներ: Քանի որ «իմ աշխարհի սահմանները» (Լյուդվիգ Վիտգենշտայն) իմ լեզվի սահմաններն են, ապա հասնել դրանց՝ նշանակում է ծանոթանալ այլ հնարավոր աշխարհների: Դա նաև նշանակում է ձգտել «ցնցել մեր մշակույթի առանցքային ըմբռումները և, առաջին հերթին, նրանք, որոնք տանում են «իրականի» գաղափարին (Ռոլանդ Բարթս): Քանի որ մենք չենք ձգտում իրերին, ինչպիսին դրանք կան, ապա, ապրել լեզվի միջոցով, մի՞թե նշանակում է ապրել աշխարհում փոխանորդների օգնությամբ: Թե՞ դա նշանակում է երազել, փոխել և ստեղծել աշխարհը, ինչպես առաջարկում են արվեստագետները:

## Արվեստագետներ

Կամիլ Բոնդոն  
Էրիկ Բալթո Վալերի  
Շտակ Դորա Գարսիա  
Վալերի Նովարինա  
Դոմինիկ Փեթիգան  
Չարլզ Փենեքվին  
Սլադեն Ստիլինովիչ:  
Կուրատոր՝  
Նիկոլա Օդյուրո

## «Բաբելոն»

Փետրվարի 4 – մարտի  
25, 2017 թ.

## Բացումը՝

2017 թ. փետրվարի 3-ին  
(ուրբաթ), ժամը 19-ին

## Մուտքը՝

Ազատ  
Երեքշաբթից  
շաբաթ, ժամը 14-ից  
18-ը